

ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՅԳԵԿՅԻԻ

ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՆ ՁԵՌԱԳԻՐԸ 1339ԷՆ

ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅԻՆ ՄԷՅ

Հ. Պ. Անանեան իր նոր հրատարակած ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՅԳԵԿՅԻՈՅ ԽՐԱՏՔ (Ս. Ղազար, 1956) գործին սկիզբը իրր յառաջաբան ունի 12 էջնոց խնամառու ուսումնասիրութիւն մը՝ Վարդան Վրդ. Այգեկցիի անձին ու գործին նուիրուած, ուր անգամ մըն ալ կը շեշտուի՝ թէ որքան քիչ բան դիտենք այս մեծ եւ հռչակաւոր իրատարան հայ մատենադրին ո՛չ միայն անձին ու կեանքին, այլ եւ անոր գործին մասին:

Քանի որ Հ. Պողոսի գիտցածին վրայ աւելի բան մը չեմ կրնար աւելցնել՝ Վարդան Վրդ. Այգեկցիի կեանքին մասին, աւելորդ կը նկատեմ կրկնութիւն ընել հոս: Սակայն կը խորհիմ որ մատենագրական կարեւոր նպատակ մը ըրած կ'ըլլամ՝ ներկայացնելով Վարդան Վրդ. Այգեկցիի Սրատներուն մէկ ամբողջական ձեռագիրը, որ տարիներ առաջ, Լոնտոնի մէջ անգլիական գրատունէ մը զննելի, եւ որ այժմ մաս կը կազմէ իմ հաւաքածոյիս:

Նախ քան հաւաքմանս այս ձեռագիրը ներկայացնելս՝ հոս պիտի ուզէի քանի մը խօսք ընել Յովհաննէս Պլուզ Երզնկացիի ուսուցիչ նկատուած՝ Վարդան վարդապետի մասին:

Հ. Պողոս Անանեան կը գրէ.

«Ոմանք նկատած թէ Յովհաննէս Երզնկացիին զինքը Ս. հայրն մեր կոչած է (Վարդանը), կը համարին որ սա աշակերտած ըլլայ նաեւ Վարդան Այգեկցիի: Յայտնի է որ Երզնկացիին մեր Վարդանի իրատներէն քաղելով կազմած է իր իրաւաւ հասարակաց քանակայից եւ ժողովրդոցը. ուստի եթէ իսկապէս Յովհաննէս աշակերտած կամ տեսած է Այգեկցիին, նշան է որ

Վարդան 1250էն ալ անդին ապրած է, քանի որ Երզնկացիին 1245ին ծնած է» (էջ 9-10):

Նախ ըսեմ որ Հ. Պողոս իրմէ վերը ըրած մէջբերումիս առաջին մասին իրր աղբիւր վը նշանակէ Ս. Սիմոնեանի մէկ գրութիւնը՝ Նկատողութիւններ Վարդան Այգեկցիի նորայայտ ձեռագիրներու վըրայ, հրատարակուած «Անահիտ»-ի 1937, թիւ 3-4ին մէջ (էջ 77-87), ուր Պրն. Սիմոնեան կը գրէ. «Ըստ մեզ, ճշգրտոյն է Այգեկցիի հայրութիւնը՝ ուսուցչութիւնը ընդունել Յովհ. Երզնկացիի վրայ, եւ մեկնելով այս իրողութենէն, կասկածի տակ առնել Այգեկցիի եւ Երզնկացիի ծննդեան եւ մահուան համար ցարդ ընդունուած թուականները»⁽¹⁾:

Ատիկա բոլորովին անհիմն եւ կամայական տեսութիւն մըն է, որ դժբախտաբար առաջ կու գայ Վարդան Այգեկցիի եւ Յովհաննէս Պլուզ Երզնկացիի կենսագրութեան վաւերական թուականներուն անդիտութենէն:

Ուրեմն մենք հոս նկատի առնենք կէտ առ կէտ:

1) Այգեկցի ո՛չ մէկ տեղ իր ծննդեան տարեթիւը տուած է: 1212ի իր յիշատակութիւնը, որ վարեւորագոյն նպատակ մըն է իր մութ կենսագրութեան լուսարանութեան համար, դժբախտաբար բան մը

(1) Էջ 85: Պարոն Սիմոնեան դարձեալ հոն կը վճռէ. «Մենք անճիշտ կը գտնենք Ն. Մատի, Հ. Տաշեանի եւն.» առաջարկուած այս թուականները, մասնաւորաբար Այգեկցի Վարդանի համար» (էջ 86 ծանոթութիւն): Դժբախտաբար Պրն. Սիմոնեան ոչ միայն յայտնուէ է իր անտեղի վճռականութեան համար, այլ եւ սխալած:

չ'ըսեր իր երբ ծնած ըլլալուն մասին: 1216ի յիշատակութեան մէջ իր ծերացած եւ նոյնիսկ մահուան մօտ եղած ըլլալուն մասին կը գրէ, սակայն 1229ին դեռ ողջ կը գտնենք զինքը:

2) Այգեկցիի վերադրուած աղօթքի մը մէջ (ԻԱ աղօթք ի Պրօպատիկէ աւագանին որ կոչի հինգ սրահ) Այգեկցի իր 61 տարեկան ըլլալը կը յիշէ: Հ. Պողոս որեւէ տարեկան ցոյց չի տար հեղինակը Այգեկցիին ըլլալուն մասին: Ուրեմն մենք ալ ընդունինք ատիկա: Ընդունինք նաեւ, որ տաղը անտարակոյս կերպով Երուսաղէմ այցելութեան առթիւ գրուած ըլլայ, թէեւ Երուսաղէմի մասին կան տաղեր, որոնց հեղինակները Երուսաղէմ չտեսած ալ կըրնան գրած ըլլալ: Սակայն կարելի է ընդունել Հ. Պողոսի այն ենթադրութիւնը՝ ըստ որում Այգեկցի Երուսաղէմ այցելած ըլլալու է Երուսաղէմի ազատագրութենէն վերջ, այսինքն 1230 թուականէն վերջ, կամ այդ տուն միայն Այգեկցի Երուսաղէմ այցելած վրնայ ըլլալ եւ իր 61 տարեկամ այցելած վրնայ ըլլալ եւ իր 61 տարեկան ըլլալու վկայութիւնը այդ թուականէն հաշուելու է:

3) Սալէտտին Երուսաղէմը գրաւեց 1187ին: Սալէտտին սակայն Հայոց հետ լաւ ու բարեկամաբար յարաբերութիւն պահեց: Մասնաւորաբար լաւ յարաբերութեան մէջ էր Գրիգոր Տղայ կաթողիկոսին, Երուսաղէմի հայ վանքերուն եւ վանականներուն եւ վերջապէս բոլոր հայ կրօնաւորներուն հետ: Ուրեմն սխալ է խորհիլ որ Այգեկցի չէր կրնար Երուսաղէմ երթալ 1187էն վերջ մինչեւ 1230:

4) Որովհետեւ Այգեկցի չէ յիշած արդէն Երուսաղէմ այցելած ըլլալը իր 1212ի, 1216ի, 1229ի յիշատակարաններուն մէջ, ապացոյց է որ ան արդէն Երուսաղէմ այցելած չ'ըլլայ այդ թուականներէն առաջ կամ անոնց միջեւ տուն մը:

5) Ուրեմն ստիպուած ենք խորհիլ որ 1216ին ծերացած ու տարիքով մահուան մերձ էր Այգեկցի, որուն մեղի ծանօթ վերջին յիշատակարանը 1229էն է: Որեւէ

հիմք չկայ որ Այգեկցի ապրած ըլլայ 1229էն վերջ երկար տուն:

6) Վերջապէս 1229ի յիշատակարանին մէջ Այգեկցի կը գրէ. «Թէ աս ոչ ժամանեմ առմանն Ե(րուսաղէ)մի, նա ի ձէնջ ով եւ մնացէ կենդանի՝ տարցէ զնա (գիրքը) քրիստոնէից»: Արդեօք Այգեկցի ակնկալութիւն ունէր կամ ընդհանրապէս կարծիք վը տիրէր, որ Երուսաղէմ նոյն տարին պիտի յանձնուի Սալէտտիններուն: Յիշատակարանին ոճը այնպէս կը ցուցնէ որ Այգեկցի Երուսաղէմ կամ չ'ըլլալըը տեղ մը կը գտնուէր Երուսաղէմի գրաւման անխուսափելի դէպքին անմիջապէս նախօրեակին, եւ իր այս յիշատակարանով կը խնդրէր որ եթէ ինք իր ծերութեան պատճառով չտեսնէ Երուսաղէմի գրաւումին ցանկալի օրը, այն տուն իր չուրջիններէն ով որ ողջ մնայ՝ իր այս ձեռագիրը տարցէ գնա քրիստոնէից անտարակոյս Երուսաղէմը գրաւող, այլապէս այս վերջին երեք բառերը իմաստ մը չունին:

Այժմ նկատի առնենք Յովհաննէս Պլուզ Երզնկացիի կենսագրութեան վաւերական թուականները:

1) Էջմիածնի թիւ 823 ձեռագիրը Յովհ. Պլուզի մեղի ծանօթ առաջին եւ հնագոյն վաւերագրութեան է իր կենսագրութեան լուսարանութեան համար: Ձեռագիրը գրուած է 1266ին, երբ Երզնկացի դեռ տարեկաւ էր: Ուրեմն Յովհ. Պլուզ առ առաւելն քսան տարեկան վրնար ըլլալ այս ձեռագրին գրչութեան տուն: Այս տուեալով՝ Երզնկացիին ծնած ըլլալու է 1245ի տունները:

2) Երզնկացի իր այս յիշատակարանին մէջ կը յիշէ իր ուսուցիչները՝ հայր Յովհ. Երզնկացիին, որ Երզնկացիին մահէն քսան տարեկան վրնար ըլլալ այս ձեռագրին գրչութեան տուն: Այս տուեալով՝ Երզնկացիին ծնած ըլլալու է 1245ի տունները:

լալ: Պարզ է որ ամենայն խանդավառ երեւակայութիւնն իսկ պիտի չբաւէր Յովհ. Պրուզը աշակերտել տալու համար Այգեկցիին:



Հայր Պօղոս Անանեանէ վերը մեր ըրած մէջբերումին երկրորդ մասը՝ ինչպէս տեսանք՝ նկատի ունի Յովհ. Պրուզ Երզնկացիի վկայութիւնը, ուր ան կը գրէ. «Եւ սուրբ հայրն մեր մեծ վարդապետն Վարդան յիւր կենդանութիւնն բազում անգամ ժողովք արար», եւն.։ Ընդունինք որ հոս յիշուած Վարդան վարդապետը Այգեկցիին իսկ է: Սակայն մենք հոս որեւէ ապացոյց չենք գտներ ցոյց տուող որ Յովհ. Պրուզ աշակերտած ըլլայ Այգեկցիին: Պարզապէս՝ որովհետեւ Երզնկացի Վարդանի համար Սուրբ Հայրն մեր կ'ըսէ, ապացոյց մը չէ որ անոր աշակերտած է: Երզնկացի, որ կազմած է Խրատ հասարակաց քահանայից եւ ժողովրդոց խրատական շարքը, կրնայ Այգեկցիի աղբեցութեան ենթարկուելով անոր գործին հետեւութեամբ խմբադրել իր գործը, եւ պարզապէս բարձր համարումէ, երախտագիտութենէ, յարգանքէ մղուած, իր սովորական համեստութեամբ՝ Վարդան Այգեկցիին կոչէր Սուրբ Հայրն մեր, առանց անոր աշակերտած ըլլալու: Յատկանշական է նաեւ նախադասութեան այն մասը, ուր Յովհ. Երզնկացի կ'ըսէ. «վարդապետն Վարդան յիւր կենդանութեանն բազում անգամ ժողովք արար»: Որոշ է որ Երզնկացի այս տողերը գրած է Վարդան Այգեկցիի մահէն վերջ: Որոշ է նաեւ որ ինքզինքը ցոյց չի տար իրր այդ ժողովներուն մասնակից: Աւելորդ է երկարել այս մասին: Նոյնպէս անհրաժեշտ է Երզնկացիի վերի վկայութեան վրայ հիմնուելով՝ Այգեկցիին իր ուսուցիչը նկատել:



Սակայն կայ Երզնկացիի մէկ վկայութիւնը որ զինքը ցոյց կու տայ աշակերտ

Վարդան վարդապետի մը: Երզնկացի կը գրէ. «Ես նուազ Յովհաննէս Երզնկացի, աշակերտ հոգեւոր հօրն եւ սուրբ վարդապետին Վարդանայ» (2): Հոս այս Վարդանին Այգեկցիին ըլլալուն մասին ոչ մէկ ապացոյց կայ:

Տեսանք թէ Յովհ. Երզնկացի մինչեւ 1266 Վարդանի մը աշակերտած չէ: 1266էն վերջ տառն մը Երզնկացիին անցաւ Տարօնի Ս. Կարապետ վանքէն եւ դնաց Կայենոյ Ձոր վանքը, ուր վարդապետութիւն կ'ընէր Վարդան Բարձրբերդցին, որ մեռաւ 1271ին, որուն մահէն վերջ Երզնկացի վերադարձաւ Կայենոյ Ձորէն Երզնկա, քանի որ Երզնկացիին 1273 Փետրուարին Երզնկա կը գտնուէր արդէն, թիւ աւանի մէջ Ս. Ներսէսի նկատուած նշխարաց գիւտին ժամանակ:

Դարձեալ կրկնեմ: Արդարեւ Երզնկացիի խրատական շարքին ներշնչող եւ աղբիւր պէտք է նկատուի Այգեկցիի համանման գործը, որուն մասին պիտի խօսեմ քիչ վերջ. սակայն Երզնկացի պարզապէս հետեւած է Այգեկցիին՝ առանց աշակերտած ըլլալու: Այս հետեւելը սխալ է յենակէտ ընել Երզնկացիին՝ Այգեկցիի ժամանակակից եւ աշակերտ ընելու անհրաժեշտ աղբիւրէն: Հ. Պօղոս դժբախտաբար սխալ առաջնորդուած իր սխալապատում առաջնորդին զոհը եղած է:



Հայր Պօղոս Անանեան խօսելով Վարդան Այգեկցիի գլխաւոր երկասիրութեան մասին կը գրէ. «Վարդան Այգեկցիին գլխաւոր գործը կրնանք համարել Խրատները, որ զանազան անգամներ եւ զանազան ձեւերով խմբադրուած են»:

«Առաջին անգամ 1212ին, Պաղտին իշխանին խնդրանքով շարադրած է զանոնք 22 խրատներու մէջ դասաւորելով: Զոր ողորմութեամբն Աստուծոյ յարմարեալ

(2) Յուշիկի, Բ. հատոր, էջ 415:

շինեցի ողորմելիս վարդան, ի չորրորդ ամի գալստեան մերոյ ի Մարաքառ ի Սուրբ լերինս յԱյգեկիս եւ եդի ի գիրս գորբեցի ի փառս Իբ (22), ի խնդրոյ քագաւորագն իշխանին որ կոչի Պաղտին: Թէ ինչ էր այս խրատներու նիւթը՝ որոշ չի գիտցուիր, քանի որ այդ ամբողջութիւնը պարունակող ձեռագիր մը դեռ գտնուած չէ» (էջ 11):

Նախ անմիջապէս աւելցնեմ որ այդ գործին ամբողջութիւնը պարունակող ընտիր ձեռագիր մը այժմ գտնուած է եւ հիմա ապահով մաս կը կազմէ իմ հայերէն ձեռագրաց խոշոր հաւաքածոյիս:

1212ին գրուած Այգեկցիի այս յիշատակարանը քանիցս հրատարակուած է, թէեւ ոչ ամբողջութեամբ: Ուրեմն նախ ես հոս իմ ձեռագիրս առնելով կը հրատարակեմ այդ յիշատակարանը:

Թող ներուի ինծի եթէ քիչ մը երկար ըլլայ ընելիք մէջբերումս, որուն կարեւորութիւնը Այգեկցիի կեանքին եւ գործին մասին խիստ կարեւոր է, թէեւ ցարդ կամայ կամ ակամայ կերպով անտեսուած է մեր մատենագրութեան մէջ:

Զեռագրիս մէջ Այգեկցիի ԻԴ (24) հատուածին վերջէն ահա կ'արտադրեմ հաւատարմօրէն այս կարեւոր յիշատակարանը.

«Յամ(ենայն)ի դու ես իմ տեղի փախըստի եւ ապաւնէ: զո՛ւ հոգա վ(ա)ս(ն) իմ ա(ստու)ծ իմ յ(իսու)ս, եւ քեզ յանձն առնեմ զամ(ենայն) կեանս իմ հոգով եւ մարմնով, եւ ամ(ենայն) ոք որ ի ծննդեմս մինչեւ ցայժմ, եւ մինչեւ ելանեմք յաշխարհէս ի մեզ բարի ակամք եւ խնամով հայեցան եւ կամ հային: Ի զայեկութի(ւն), ի սնունդ, ի տուրս, յողորմութի(ւն)ս յ ա զ ա լ թ ի ց յանձնարարութի(ւն)ս, ի բանս բարիս, ա(է)ր յ(իսու)ս ք(րիստո)ս միոյն հարիւրապատիկ հատոյնոցս աստ եւ հանդերձեալսն յանձառ փառաց քոց: Զծնողսն իմ որ դառն վշտաւք ծնան զիս, եւ մեծ տառապանաւք սնուցին զիս, եւ գորովագոյթ աղէխարչ էին ի վե-

րայ իմ: Տ(է)ր յ(իսու)ս ք(րիստո)ս ա-մ(ենայն)ի, որ ծնար մարմնով ի սրբոյ կուսէն մարիամա, բարեխաւուած(եամ)բ մաւր քո եւ ամ(ենայն) սրբոց քոց, ջնջեա զամ(ենայն) յանցանս եւ զմեղս նոցա ողորմութե(ամ)բ քո, զկամայ եւ զկամայ զգիտութե(ան) եւ զանգիտութե(ան), եւ զամ(ենայն) աղգականաց եւ զամ(ենայն) ուսանողաց գիտութե(ան) եւ բարի մասին: Եւ զիս դտառապեալս ողորմելիս, որ անուամբ յաջս մարդկան գովիմ եւ բարի երեւիմ. եւ ոչ առ ա(ստու)ծ քանդի յոյժ հեռացեալ եմ յա(ստուծո)յ, փրկեա յորդայթէ մեղաց, եւ ազատեալ ի կցորդութե(ան) աւտար շարաւալից յանցանաց: եւ ըստ կարողութե(ան) զաւրութե(ան) իմոյ թոյլ տուր զալ փորձութե(ան) ի վերայ իմ, եւ դու զաւրացոյ ի հանդէս նորա, եւ զառաւելն ի բաց հերքեա: Նայեւ զհոգիս ամ(ենայն) ծը-նընդոց աղամա, եւ որք ծնունդ են ս(ուր)բ աւագանին, որք էին յառաջ քան զմեզ եւ որք ի մերում ժամանակիս եւ որք գան յետո մերո: մինչեւ փողն հարկանի: Զամենեսեան փրկեա ա(է)ր ա(ստու)ծ արարիչ ամ(ենայն)ի, յանքուն որդանցն եւ յանչէջ զեհնոյն: ի չար սառնամանեացն եւ դառնակալիժ տանջանացն, ի թանձր խաւարէն եւ յանհանկիստ տարտարոսէն: եւ զմեզ եւ զնայ որ խնդրեաց զրել զայս զիրս, ծնողաւք մերաւք եւ աղգականաւք, եւ զամ(ենայն) ջնջեցեալսն ա(է)ր յ(իսու)ս ք(րիստո)ս, անճառ բարեացն ար-ժանաւորս առնէ ընդ ամ(ենայն) ս(ուր)բս իւր որ է աւրհնեալ ընդ հաւր եւ ընդ որդո եւ ընդ հոգոյն սրբո այժմ»:

«Ես ողորմելիս վարդան տղէտս ի գիտնականս, եւ անմանս ի կարգաւորս: զըրեցի զայս ա(ստու)ծաբնակ տառս, ի խնդրոյ ա(ստու)ծաւք իշխանին պ(ա-րո)ն պաղտինին, որ է աղն թագաւորին, եւ աղաչեմ անմեղադիր լինել զրիս տխմարութե(ան) զի այս էր կարն մեր, եւ որչափ հասու եղեւ միտք մեր: ողորմութե(եամ)բն ա(ստուծո)յ ժողովեցաք յալի-

նացն ա(ստուծո)յ եւ եղեալ ի սմա: եւ այս յոյժ ծանր եղեւ մեղ զի երկու ամ է, որ ի սրազումն աշխարհի էաք եւ ոչ յընթերցոյն զըոց: քանզի բունն է կարիք մարմնոյ յորժամ պակասէ, զի հալածական եղաք ի բնիկ ժառանգութենէ մերմէ ի յերկրէն կիւրիսոյ, եւ ի դաւանէն տըլոյ եւ եկայք յայգեկա, եւ ա(ստուծո)յ ի բարի յաջողեաց զամ(ենայն) զործս մեր, եւ զպէտս մարմնոյ: իսկ ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի զսա: Եւ յորժամ սկսուաք ի սա եւ կատարեցաք զսա յա(ստուծո)յ բնակ ցանկալի անապատս յայգեկա, ընդ հովանեաւ ա(ստուծո)յ ընկալ եւ հրաշադան սրբոցս, ս(ուր)բ սինի, եւ ս(ուր)բ կարապետի, եւ յառաջնորդութե(ան) ս(ուր)բ ուխտիս ա(է)ր կոստանդեա սրբբանեալ եպիսկոպոսի մատաղ հասակաւ նորընծա գալով, յաստիճան ժամանեալ յառաքելական: Էր թուականին հայոց, ոկա (1212), եւ էր թագաւոր հայոց լեւոն յորթնեանց ի նիղիկիս (կարդա Կիլիկիա, Յ. Ք.) ք(րիստո)սապաւ եւ ահարկու ի վերա անաւրինաց, եւ էր ի վերի հայք անուանիք, եւ գաւառաւոր հալածիչ անաւրինաց: Եւ է ի Դ. (24) ամ որ գրեալ է (կարդա գրաւեալ, Յ. Ք.) անաւրինաց յե(րուսաղէ)մ եւ բարձաւ թագաւորութի(ւն)ն յունաց, եւ ազգն արեական առ զկոնդանդինուպաւիս, եւ յայսմ ամի փոխեցաւ ա(է)ր դաւիթ որ կալաւ զկաթողիկոսութի(ւն)ն սակաւ ամաւք ի յարքակաղին: Եւ արդ աղաչեմ զայնեան որք ընթեռնուք զսա, աղաւթս արարէք ա(ստուծո)յ ասէր իշխանին պ(ա)ր(ոն) պաղատինին, որպէսզի ա(ստուծո)յ ի խաղաղութե(ամբ) պահեցէ զնա, հարազատ աղբաւրաւքն իւրովք, եւ թողութի(ւն)ն շնորհեցէք ամ(ենայն) ննջեցելոցն նորա զի թողցէ ա(ստուծո)յ զյանցանս նոցա: Յիշեցէք եւ զողորմելիս վարդան, որ յարմարեաց ըզսա, եւ զծնաւդան իմ եւ զեղբարս եւ զաղգականս եւ որք յիշէք զմեղ որ աստ զընցան յիշէ ա(ստուծո)յ եւ ըզննջեցեալն ձեր ի բարի եւ նմա փա(ռք):

Փառք ամենաա(ուր)բ Երրորդութեանն անրաժանելի, հաւր եւ որդւոյն եւ հողւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն »:



Նախ քննենք այս յիշատակարանին ժամանակը:

Վարդան Այգեկցի կը վկայէ որ ՌԿԱ Հայոց թուականին աւարտած է իր այս գործը: ՌԿԱ Հայոց թուականը հաւասար է Քրիստոսի 1212ին: Այգեկցի կ'աւելցնէ որ Երուսաղէմի յանաւրինաց, այսինքն մահմանականներէ գրաւուելէն 24 տարի վերջ է գրչութեան աւարտելը: Սալաէտ-տին՝ Երուսաղէմը գրաւեց 1187ին, որուն վրայ աւելցնելով Այգեկցիի 24 տարիները՝ արդարեւ կը ստանանք 1211-12 Քրիստոսի թուականը: Իսկ Լատիններէն Պոլսոյ գրաւումը տեղի ունեցած էր 1203ին:

Հոս կը յիշուի նաեւ Դաւիթ կաթողիկոս ի Արքակաղին: Այս Դաւիթը ծանօթ է իբր Դաւիթ Գ. Արքակաղնեցի, եւ էր Մամեստիոյ նախկին արքայիսկոպոսը, զոր Լեւոն Մեծ՝ կաթողիկոսութեան բարձրացուց 1207ին: Այլուստ Դաւիթի մահուան տարին կը նշանակուի 1211: Կը յիշէ նաեւ Այգեկի ուխտին առաջնորդ Կոստանդին եպիսկոպոս մը, որու մասին ուրիշ աղբիւրէ որեւէ տեղեկութիւն չունինք(3): Յիշուած Լեւոն Ռուբինեանը իբր իշխան Բ.ն է եւ կամ իբր թագաւոր Ա.ը: Ան թագաւորեց 1198էն մինչեւ 1219, երբ մեռաւ:

Ուրեմն պարզ է որ յիշատակարանը իր ժամանակագրութեամբ վաւերական է եւ իրապէս 1212էն, աւելի ճիշտ՝ 1211 - 1212էն:

(3) Աճառեան իր Անճանուցներու Բառարանին մէջ երկու տարբեր անձեր նշանակած է Կոստանդիններուն շաքին, իբր թիւ 41 եւ 42: մինչ այս երկուքը նոյն անձն են, այսինքն Այգեկի ուխտին առաջնորդը:



Այգեկցի հոս իր մասին կու տայ կենսագրական տեղեկութիւններ, որոնք չահեկան են: Սակայն թող ներուի ինծի եթէ այս առթիւ միջամուխ ըլլամ այդ կենսագրութեան ինչ ինչ մանրամասնութեանց: Գրուած որ մը առիթ ունենամ թէ՛ Այգեկցիի եւ թէ Պաղտին իշխանին մասին աւելի մանրակրկիտ խօսիլ:

Այժմ անցնինք ձեռագրին նկարագրութեան եւ գրչութեան թուականին, եւն.:

Նիւթը հաստ թուղթ 214 թերթերէ բաղկացեալ, 22,3 × 15,4 հարիւրորդամեղը մեծութեամբ՝ այժմ հաստակազմ ձեռագիր մըն է, միասին, 19 տող, հին ընտիր բոլորգրով, միայն սկիզբը մեղանազարդ (կարմիր եւ սև) ծաղիկաւ անհեթեթ փորձ մը եղած է: Զեռագիրս վերակազմուած է հաւանաբար ԺԵ. դարուն մէջ ատեն մը, Երբ Ետեւի թերթերէն ոմանք խնամով նորոգուած են, երբ հաւանաբար միջին Մետրոպոլիտան կոչուած Երկաթագիր մագաղաթեայ Աւետարանէ մը հանուած մէկուկէս թերթ պահպանակներ գրուած են: Զեռագրին մէջ կայ վերջը աւելցուած թերթ մը՝ Աղարիս Սասնեցիի Աստուածաշունչի համարներուն մէկ ցանկը ՌԾԹ (1610)ին գրուած Կ. Պոլիս:

Էջ 202ա բուն գրչէն կայ սա յիշատակարանը.

«Գրեցաւ զիրքս այս խրատ անլուծանելի, ի պէտս հողոյ եւ մարմնոյ: Եւ իմ հայեցեալ ի բանս աւղտութե(ան), ցանկացող եղէ ևս նուաստ ծառայս ա(ստուծո)յ սարգիս լուսեցի: Եւ ետու գրել զսա ի վարժումն եւ ի կրթութի(ւն) անձին ի մոյ, եւ ի սրազումն կենաց իմոյ: Եւ ի պատճառս ազատութե(ան) ճանաչել եւ յիշել զանթիւ համարս Երախտեաց իմոյ արարչին: Եւ սովաւ յարաժամ մատուցանել զգոհարանութի(ւն) գերագոյնին բաւեաց»:

«Այլ եւ ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոյ, առ ք(րիստո)ս հանկուցելոցն: Արդ զընցաւ սա ի քաղաքս ազախ ընդ հովանեաւ սրբոյն զըրիզորի ձեռամբ անիմաստ եւ անարժան սուտ ք(ա)հ(անայ)ի. անուամբ միայն կոչեցեալ: մկրտ(իչ): որ եւ աղաչեմ զամենեան, անմեղադիր լինել վ(ա)ս(ն) անարհեստութե(ան)ն եւ վ(ա)ս(ն) սղալանացն զի կայր մեր այս էր»:

« Աղաչեմ յիշել ի ա(է)ր զպ(ա)ր(ոն) սարգիսն, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց: Ընդ նմին եւ զմկր(տիչ) քահ(անայ) դժող սորին: Եւ որ յիշէ ինքն յիշեալ լիցի առաջի փեռելոյն ք(րիստոս)ի: Ի թվ(ին): չձը (1339): զէկա(եմբեր) »: Թերթը հոս քիչ մը նորոգուած է, որով ամսաթիւն չունի:

Անտարակոյս այս ձեռագիրն է որ Յ. Կ. Ճանիկեան տեսած է 1884ին, երբ իր Հնութիւնք Ակնայ (Թիֆլիս, 1895) գործը խմբագրած է:

Ահա ինչ որ կը գրէ.

«Ս. Գեորգ եկեղեցւոյ մօտի թաղն Կէլ-կէլեանի քով ձեռագիր գիրք մի կայ, որոյ ցանկն է վասն երրորդութեան, վասն քրքոյ իշխանին, վասն պահոց, վասն աղօթից եւ այլն ԺԹ. գրուիս (իրականին մէջ ԻԴ. գրուիս, Յ. Ք.): Գրուիս բ. գրբուած է քուղք Պր. պաղտէն քաղաքագն եւ քրիստոսաւէր մեծի իշխանին ըզ-քրիստոսակիր անձին գտարք եւ գարբու-նական վարդապետիս Վարդանայ եւ յետ քրիստոսի յուսոյդ մերոյ, զպատուական եւ գողցումաբեր նամակս ընթերցայ եղբայր պաղտին եւ յոյժ ուրախացաւ. եւ այլն. որպէս քէ զննեցեալսն մեր տեսաւ կենդանի գիարազատն մեր սուրբ քահանայն բարսեղ եւ գմեծ իշխանն ամպատ եւ զպանծալի նախնիքն մեր վարդանայ հաւոյ գեպիսկոպոսն մեր բարսեղ. եւ այլն: Ի վերջն. գրեցաւ գիրքս եւ այլն. ցանկացող եղէ եւ նուաստ ծառայ Աստուծոյ սարգիս լուսեցի եւ ետու գրել զսա ի վարժումն եւ ի կրթութիւն անձին իմոյ. արդ գրեցաւ սա ի քաղաքս ազախ

ընդ հովանեալ սրբոյն Գրիգորի ձեռամբ անիմատու եւ անարժան սուտ քահանայի անուամբ միայն կոչեցեալ մկր եւ այլն. 22Ը (1339) դեկտ: Նօտարգիր սխալ է եւ պէտք է ըլլայ բոլորգիր, Յ. Ք.)»(4):

Ճանիկեանի նկարագրութիւնը եւ տրւած յիշատակարանը տարակոյս չեն թողուր որ Աննայի Կէլիէլեանի սեպական այդ ձեռագիրն է որ գրեթէ 70 տարի վերջ Լոնտոն կը գտնէի եւ իմ հաւաքածոյիս մէջ կ'առնէի:

Իմ ձեռագրէս, գուցէ անկէ իսկ օրինակութեամբ, եթէ ոչ իմ ձեռագրիս բնագրէն, կայ երկրորդ օրինակ մըն ալ, որ այժմ Երեւանի 811 թիւը կը կրէ: Ասիկա ձառնարկը եւ վարդան Այգեկցու խրատներուն մէկ օրինակն է սա յիշատակարանով. «Արդ զրեցաւ եւ ձառնարկիս ի ս(ուր)բ եւ ընտիր աւերիսակէ ձեռամբ ամենայնից սուտանուն ք(ա)հ(անայ)ի տ(է)ր տիրի (տիրացուի, Յ. Ք.) ի խընդրոյ ինձ ի ծնողաց իմոց Սարգիս ք(ա)հ(անայ)ի եւ մաւրն իմ Գոհար Մէլիքին ... ի թուականութեանս հայոց Չուղ (1341), ի թագաւորութեանս հայոց Լէւոնի որդի Աւընդորի եւ ի կաթողիկոսութեան տ(է)ր Միսիթարայ, զրեցաւ զիրքս յաշիւ(ա)րհիս ամենաւրհեալ խան Աւընդորի եւ բազմահամբաւ որդոյ Դինիպէլին ի քաղաքս յԱղախս առ դրան ս(ուր)բ Գրիգորոյ լուսաւորչին եւ յայսպիսկոպտութեան տ(է)ր Ստեփանոսի որդոյ Գր(ի)գոր ք(ա)հ(անայ)ի Սուղդացոյ եւ յաւազ երկրութեան տ(է)ր Սարգիս որդոյ Մանուէլ ք(ա)հ(անայ)ի:

Ես Տիրացու... ք(ա)հ(անայ)ս... յերկրէն և կի յայն Հայաստան ի քաղաքէն այն պատուական Որ իւր անունն է Երեւան, Ու վիրապին ու էջմիածնին է հարեւան, ի լեռնն ի մաւտս Արարատեան, Անդր որ տապանն է մեծ Նոյէն,

(4) էջ 80-81:

(5) Հին Յիւլիան: Գրեց Յերմանդ Շահադիդ: Յերմանդ, 1931, էջ 72-73:

Ու նշխարն ի նեանէ մեր նախնեան, ի ծովս անցայ այս անսահման ի քաղաքն էլայ ի Փռանկ Կաֆան, յԱղախս էկի այս աննման Գրիգոր զրեցի զայս զՎարդան, զՏ(է)ր տ(ի)ր(ացու) զԵրիս այս անպիտան,

Դուք յեզեցէք թող չեմ արժան(5):



Բնականաբար հետաքրքրական է թէ ի՞նչ եղած է իմ բնագրիս օրինակը, ո՞րքան հին էր: Գործին խմբագրութեանն, այսինքն 1212էն մինչեւ իմ ձեռագրիս օրինակութիւնը, այսինքն մինչեւ 1339 հաղիւ 127 տարի անցած է, որ սովորական պայմաններու տակ ձեռագրի մը առաջին վերակազմութեան ժամանակն է: Հայերէն հին ձեռագիրները սովորաբար 100-125 տարին անդամ մը վերակազմութեան կարելի էր ունենալ: Իմ ձեռագրիս զրեցի Մկրտիչի յիշատակարանին մէջ բան մը չ'ըսուի բերանագրին հնութեան եւ վիճակին մասին, որով գուցէ պէտք է ընդունիլ բնագրին լաւ եւ ամբողջ ըլլալը:

Բազմալեզուութիւն Հ. Գարեգին Զարբհանեան կը յիշէ որ Երուսաղէմի մեր վանքին հաւաքման մէջ իբր թիւ 936 կայ Այգեկցիի մէկ ձեռագիրը, եւ տուած յիշատակարանէն դատելով իմ ձեռագրիս մէկ օրինակն է: Հայր Զարբհանեան տուած է Այգեկցու 1212ի յիշատակարանը, եւ համեմատելով ատիկա իմ ձեռագրիս յիշատակարանին հետ՝ կը գտնեմ քանի մը տարբերութիւններ, որոնցմէ կարեւորագոյնը ձեռագրիս Սուրբ Սիմեոն տեղ Հ. Զարբհանեանի Սուրբ Աստուածածին նշանակելն է, եւ ձեռագրիս 1212ին ՈՒՍԻՆ տեղ ՈՒՍԱ (1222) նշանակելն է(6):

Արդեօք Հայր Զարբհանեան զո՞հ

(6) Ասկէ տարուելով Աճառեան իր Անճառեան-նիւր Բառարանին մէջ Դաւիթ Գ. Արքեպիսկոպոսի մահուան 1212 թուականը նշանակելէ վերջ՝ կը յիշատակէ թէ կայ յիշատակարան մը՝ որ մինչեւ 1212 կը յետաձգէ Դաւիթի մահը, ինչ որ անկարելի է:

զացած է Երուսաղէմի թիւ 936ին, Այգեկցիի յիշատակարանին սխալ արտագրութեան, թէ իրապէս թիւ 936ը այդպէս յիշատակագրուած է: Առ այժմ ի վիճակի չեմ ստուգելու: ՈՒՍԱ (1222) անտարակոյս սխալ է եւ եթէ արտագրողը վերկայ չէ, այն ատեն Սաղէմի թիւ 936ը ոչ միայն բնագիրն է իմինիս՝ այլ սխալաշատ օրինակութիւն մըն է, առ նուազն անվստահելի:



Այժմ անցնինք ձեռագրիս պարունակութեան:

- էջ 3ա պարունակութեան ցանկն է.
- «Յանուն ա(ստուծո)յ այս ինչ է եղեալ ի գիր յայս ըստ կարգի:
- Ա) Վասն ս(ուր)բ երրորդութե(ա)ն եւ զի յաջողեցէ զգործս մեր:
- Բ) Վասն թղթոյ իշխանին:
- Գ) Վասն գովութե(ան) իշխանին:
- Դ) Վասն վերին ե(րուսաղէ)մի եւ անձն առ հանգրստեան արդարոյն:
- Ե) Վասն հոգւոյն ննջեցելոցն թէ այլն որպէս կան:
- Զ) Վասն բարի գործոց:
- Է) Վասն աղաւթից:
- Ը) Վասն պահոց:
- Թ) Վասն աղքատութե(ան) եւ հեղուութե(ան) եւ խոնարհութե(ան)...
- Ժ) Վասն ողորմութե(ան) սիրոյ եւ զբութե(ան):
- էջ 3բ պարունակութեան ցանկն է.
- ԺԱ) Վասն զղման խոստովանութե(ան) եւ խոնարհութե(ան)...
- ԺԲ) Վասն զԺոխոց եւ դառն տանջանաց նորա:
- ԺԳ) Վասն մեղաց եւ թէ որք են հպարտութի(ւն) ամբարտաւանութի(ւն) սնարկառութի(ւն) եւ այլ բազում չարեաց որոց մայր հպարտութի(ւն) է այլ չարեաց:
- ԺԴ) Վասն որովայնամ(ո)լութե(ան) եւ արբեցութե(ան):

- ԺԵ) Վասն կռապաշտութե(ան) եւ կախարգութե(ան):
- ԺԶ) Վասն շնութե(ան) եւ պոռնկութե(ան) արուագիտութե(ան) եւ անասնագիտութե(ան):
- ԺԷ) Վասն զրկանաց, եւ դողութե(ան) եւ անասնագիտութե(ան) եւ վաշխից:
- ԺԸ) Վասն ոխակալութե(ան), եւ այլ չըջական մեղաց:
- ԺԹ) Վասն յիշոցատուաց:
- Ի) Վասն տան համարոյ որ է թիւ վատարեալ ի խորհրդան, եւ է լցեալ զերակատար իմաստութե(ամ)բ:
- էջ 4ա պարունակութեան ցանկն է.
- ԻԱ) Վասն գալլատեան որդոյն ա(ստուծո)յ եւ դատաստանի նորա:
- ԻԲ) Վասն ծննդեան նեոին. եւ աստակման նորա:
- ԻԳ) Վասն ծուլութե(ան), եւ մեղաց եւ համարձակութե(ան):
- ԻԴ) Վասն աղաւթից որ է ի պէտս աշխարհի:

Ձեռագրիս պարունակութիւնը կը համապատասխանէ տրուած ցանկին եւ կը հասնի մինչեւ էջ 201բ: Էջ 202ա՝ զրէին յիշատակարանն է: 202բ՝ հին այլ տարբեր գրչութեամբ առակի պիտանիք, որ կ'աւարտի էջ 203ա-ի տակ: 203բ-ը պարագ է, բացի քանի մը զրչափորձերէ: 204ա կը սկսի Բաճի վ(ա)ս(ն) յիշոցարկ, որ տարբեր է ԺԹ. գլխին վասն յիշոցատուաց-էն, որ կը հասնի մինչեւ էջ 211բ: Ասիկա գրչութեան ժամանակակից այլ տարբեր բոլորգրով է: Վերջապէս էջ 212ա եւ բ բուն զրչէն անխորագիր գրութիւն մըն է, մի գուցէ բնագրին մէկ թերթին կրկնութիւնը:

Այգեկցիի գործերուն այս բնոյթը ձեռագրին պարունակութիւնը կ'արժէ որ ուսումնասիրութեամբ եւ դատ հրատարակութեամբ լոյս ընծայուի: Այսպէսով անտարակոյս Այգեկցին աւելի լաւ պիտի ճանչցուի մեր մատենագրութեան մէջ եւ խոշոր պահաս մը ամբողջացուած կ'ըլլայ:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ